Հովհաննես Թումանյան

Ծիտը

Լինում է, չի լինում՝ մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թոնիր վառի, հաց թխի: Ասում է .

Նանի՛ ջան, նանի՛, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի, թե՝ փուշը ետ տուր ինձ:

Պառավն ասում է .

Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՝

Իմ փուշը տուր, թե չէ՝ դես թռչեմ, դեն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառավը մի լոշ է տալի: Ծիտը լոշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում: Ասում է .

Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ լոշը, ա՛ռ, կաթնի մեջ բրդի՛, կե՛ր . ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՝ լոշս տուր:

Հովիվն ասում է .

Կերա:

Չէ՛, ասում է, իմ լոշը տուր, թե չէ դես թոչեմ, դեն թոչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թոչեմ:

Հովիվը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թոչում: Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն: Ասում է.

Ի՞նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցեք, քեֆ արեք . . . Ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի թե՝ իմ գառը տվեք:

Ասում են .

Մորթել ենք, կերել, ո՞րտեղից տանք:

Սա կանգնում է թե՝ չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՝ դես թոչեմ, դեն թոչեմ, հարսին առնեմ, դուրս թոչեմ:

Ու հարսին առնում է, թոչում:

Գնում է, գնում, գնում է, տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է .

Աշուղ ախպեր, առ էս հարսին, պահի՛ քեզ մոտ: Ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, աշուղի առաջը կտրում թե՝ իմ հարսը ինձ տուր:

Աշուղն ասում է .

Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՝ չէ՛, իմ հարսը տուր, թե չէ՝ դես թոչեմ, դեն թոչեմ, սազիկդ առնեմ, դուրս թոչեմ:

Աշուղը սազը տալիս է իրեն:

Սազն առնում է, ուսը գցում, թոչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճտվտալով երգել .

Ծընգլը, մընգլը,
Փուշիկ տվի, լոշիկ առա,
Լոշիկ տվի, գառնիկ առա,
Գառնիկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սազիկ առա,
Սազիկ առա, աշուղ դառա,
Ծընգլը, մընգլը,
Ծի՛վ, ծի՛վ:

Մին էլ հանկարծ սազը վեր ընկավ ջարդվեց, ծիտը թռավ գնա՛ց, հեքիաթն էլ վերջացա՛վ: